

ՄԻՇՏ ԶՈՂԵՐ

ԵՒ ԼԱՐՈՒԱԾ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Ազդամբի շրջանէն ումրակոծութիւններ կատարուած են Սեպ. 16 եւ 17-ին Ասկերանի կարդ մը բնակավայրերու վրայ: Առաջին իսկ տեղեկութեանց համաձայն 6 մեռեալ կար (4-ը՝ մանուկներ) եւ 12 վիրաւոր: Հայկ. ինքնապաշտպանութեան ուժերու համաձայն, այս ումրակոծութիւնը նախանշան մը կը նկատուի պատրաստըւող ծաւալուն յարձակումներու:

Ուրբաթ առաւօտ (Սեպ. 18) մեր առած լուրերը Երեւանէն կը հաստատէին թէ միշտ լարուած կացութիւն կը տիրէ սահմանամերձ շրջանները: Ռմրակոծուած են Իջևանի Սարիգիւղ, Բերքարեր, Կայանաւան գիւղերը:

Ռմրակոծութիւն եղած է նաեւ եւ ուժով Կասրանի վրայ, ուր 3 մեռեալ կայ եւ 10 վիրաւոր: Շատ լարուած է Լաչինի գօտիին շրջանը, ուր Ազերիները բուռն հրետակոծումի դիմած են, հոս ալ 3 մեռեալ կայ: Հայկ. ընդդիմութիւնը եւ հակա-յարձակումները վերջ տուած են գնդակոծումին:

Արցախեան շրջանը, բուռն յարձակումներ գործած են Ազերիները Բերդաշէնի (Մարտունի) վրայ, ուր 2 մեռեալ կայ (մէկը՝ մարտիկ մը), քարուքանդ եղած են ութ առձեւ եւ մասնակի կերպով 20-ուրիշներ, յարձակումներ եղած են նաեւ Հաղրութի շրջանի Նորշէն, Կարմիր Շու-